ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս(37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax.(37410) 349 392

N 01-14/560 02.12.2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում առկա ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը*.

1. Գնման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի ղեկավարին ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի /այսուհետ նաև՝ հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի հոկտեմբերի 8-ին հայտարարված տանիքիների վերանորոգման նյութերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) արդյունքում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից է ճանաչվել ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն ((ՀՎՀՀ 0291076, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող 25/14շ 76բն, էլեկտրոնային փոստի հասցե՝ creative.business1920@gmail.com, հեռախոսահամար՝ 041072007): ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով սույն թվականի նոյեմբերի 13-ին էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգի միջոցով ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին է ներկայացվել համապատասխան պայմանագրի

նախագիծ և վերջինիս երկկողմ հաստատման համար անհրաժեշտ պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկ:

Սույն թվականի նոյեմբերի 21-ին ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 20-ը ներառյալ, չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները, առաջարկում ենք ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հիմնադրամի կարիքների համար 08.10.2024թ-ին հայտարարված Ընթացակարգի արդյունքում, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն և 13.11.2024թ-ին վերջինիս էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգի միջոցով ներկայացվել է համապատասխան պայմանագրի նախագիծ և պայմանագրի երկկողմ հաստատման համար անհրաժեշտ պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկ:
2. ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 20-ը ներառյալ, չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները:
3. 21.11.2024թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագրի, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումներ չներկայացնելու փաստը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Հիմնադրամի տնօրեն Գ. Քառյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով ընթացակարգի շրջանակներում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով

եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ներկայացրած հիմքերը՝ ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀԿՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	**որպես ընտրված մասնակից** հրաժարվել կամ **զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**	
ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ	0291076	-	X		X	02.12.2024 թ. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ՝ Գ. ՔԱՌՅԱՆ